Քաղաքական վարչակարգի գնահատումը քաղաքական մշակույթի խոսութային չափման միջոցով. Հայաստանի դեպքը

ԷՄԻԼ ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարան

Հոդվածում առաջարկվում է քաղաքականության մեջ կիրառվող խոսույթի հիման վրա գնահատել քաղաքական մշակույթի մակարդակը և առկա քաղաքական վարչակարգի բնույթը: Հիմնավորվում է, որ քաղաքական խոսույթի ուսումնասիրության միջոցով քաղաքական մշակույթի չափման առաջարկվող մեթոդաբանությունը (քաղաքական մշակույթի խոսութային չափումը՝ ՔՄԽՉ) կարող է արդյունավետ և այլընտրանքային մեթոդ լինել գոյություն ունեցող քաղաքագիտական չափման քանակական մեթոդների բազմության մեջ: Առաջարկվող մեթոդաբանությամբ քաղաքական մշակույթի խոսութային չափման համատեքստում առանձնացվում են այն լեզվական իմաստային միավորները՝ բառեր, բառակապակցություններ, արտահայտություններ և այլն, որոնք կարող են հատկանշական լինել քաղաքական վարչակարգը գնահատելու գործում: Մեթոդը կիրառվել է Հայաստանում քաղաքական մշակույթի չափման և քաղաքական վարչակարգի գնահատման համար: ՔՄԽՉ մեթոդով իրականացված հետազոտության արդյունքում հիմնավորվում է, որ Հայաստանում ձևավորվել է կիսաավտորիտար, դեպի կիսաժողովրդավարական տեղաշարժված վարչակարգ, որտեղ գերակշռում է ոչ կառուցողական բազմակողմ խոսույթը կամ դրա իմիտացիան, ինչպես նաև քաղաքական մշակույթում շարունակում են տիրապետող լինել թույլ մասնակցային քաղաքական մշակույթի տարրերը:

Բանալի բառեր

Քաղաքական մշակույթ, քաղաքական խոսույթ, քաղաքական վարչակարգ, ՔՄԽՉ մեթոդ, հետխորհրդային տրանսֆորմացիա

Քաղաքական խոսույթի վարչակարգային առանձնահատկությունները

Հասարակական-քաղաքական գործընթացներում ներքին և արտաքին տարբեր գործոններով պայմանավորված նոր մարտահրավերները, ժամանակակից ավտորիտար վարչակարգերի կողմից գործածվող կեղծ ժողովրդավարական խոսույթը պահանջում են քաղաքական մշակույթի և վարչակարգերի գնահատման արդի և ավելի արդյունավետ գործիքակազմի մշակում, քանի որ սույն խնդրի վերաբերյալ հետազոտական աշխատանքները ցույց են տվել, որ քաղաքական մշակույթի, վարչակարգերի գնահատման և դասակարգ-

ման նպատակով կիրառվող դասական մոտեցումները չեն կարող լիարժեքորեն համապատասխանել ժամանակի պահանջներին: Այս ամենը պայմանավորված է նոր աշխարհակարգի ձևավորման արագ տեմպերով, ինչպես նաև հասարակական և քաղաքական համակարգերի տարատեսակ տրանսֆորմացիաներով:[1]

Թեև ժողովրդավարության կայացման ու զարգացման խնդիրների հետազոտության նպատակով քաղաքական մշակույթի ուսումնասիրությունը կիրառվում է անցած դարի 80-ական թվականներից, սակայն վարչակարգերի գնահատման և դասակարգման նպատակով ակտիվորեն օգտագործվում է միայն վերջին շրջանում: Քաղաքական խոսույթի հիման վրա վարչակարգերի ուսումնասիրությանը նվիրված աշխատանքներում դիտարկվում են ինչպես ավտորիտար և ամբողջատիրական, այնպես էլ ժողովրդավարական վարչակարգեր, այդ թվում՝ մի քանի հետխորհրդային երկրների օրինակներ, սակայն այդ մեթոդի հիման վրա հետխորհրդային երկրների վարչակարգերի համալիր ուսումնասիրություններ դեռևս չկան: Հետևաբար, այդ ուսումնասիրությունների տեսակետից դեռևս բացահայտված չեն այդ խմբի երկրների ընդհանուր և մասնակի առանձնահատկությունները:[2]

Հետխորհրդային երկրների վարչակարգերի համալիր ուսումնասիրությունը պետք է հաշվի առնի դասական մեթոդներով դրանց ուսումնասիրությունների ինչպես արդյունքները՝ որպես համեմատական ուսումնասիրության հիմք, այնպես էլ փորձը, որը ցույց է տալիս, որ թեև հետխորհրդային տրանսֆորմացիան ենթարկվում է անցումագիտության մի շարք ընդհանուր սկզբունքների, սակայն ունի նաև էական առանձնահատկություններ, որոնց անտեսումը հանգեցնում է արմատական անճշտությունների ու սխալների ինչպես այդ

[1] **Թորոսյան Տ.** Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2006:

[2] **Օրդուխանյան Է.** Քաղաքական խոսույթի հիման վրա հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների վարչակարգերի գնահատման հնարավորություններն ու խնդիրները, *Հայկական Քաղաքագիտական Հանդես*, 1(2) 2015, 59-83:

երևույթի ուսումնասիրման, այնպես էլ զարգացումների կանխատեսման ու ճշգրտման ժամանակ:[3]

Քաղաքական խոսույթի վարչակարգային առանձնահատկությունների ուսումնասիրությունն ուղղակիորեն կապված է հասարակության քաղաքական մշակույթի դրսևորումների հետ, քանի որ քաղաքական մշակույթը ներառում է քաղաքական համոզմունքներն ու հարաբերությունները, որոնք փոխկապված են պետական ինստիտուտների հետ: Քաղաքական համակարգում հարաբերությունները ներառում են քաղաքական հանրույթի, վարչակարգի և քաղաքական դերակատարների կապերը:[4] Հետևաբար քաղաքական դերակատարների խոսույթի հատկանիշների ուսումնասիրությունը կարող է բացահայտել քաղաքական վարչակարգերի առանձնահատկությունները և հիմք դառնալ դրանց դասակարգման համար:

Մասնավորապես, պոպուլիզմի և քաղաքացիական մշակույթի համեմատական խոսութային վերլուծությունը լատինամերիկյան երկրներում թույլ է տվել Մարտինես Ռամոսին հանգել եզրակացության, որ այդ երկրներում կիրառվող քաղաքական խոսույթի ուսումնասիրությամբ կարելի է առանձնացնել այնպիսի հատկանիշներ, որոնք բնութագրում են ինչպես առկա քաղաքական մշակույթն, այնպես էլ քաղաքական վարչակարգերը:[5]

Քաղաքական վարչակարգերի ուսումնասիրության համատեքստում ուշագրավ է «Ամբողջատիրական և ավտորիտար խոսույթներ. Գլոբալ և հավերժական երևո՞ւյթ» աշխատությունը, որտեղ հետազոտվում են ամբողջատիրական և ավտորիտար խոսույթների գործածությունը և դրանց հետևանքները: Այս հետազոտության մեջ հիմնականում շեշտադրվում է կոմունիստական խոսույթը՝ հաշվի առնելով նախկին Արևելյան Գերմանիայի, Հարավսլավիայի, Ռումինիայի, Լիտվայի, Չինաստանի, Հյուսիսային Կորեայի, Ֆիլիպինների, Բիրմայի, Կուբայի և Թունիսի դեպքերը: Համեմատական վերլուծության են ենթարկվում նախկին և ներկա խոսույթները: Արդյունքում՝

---

[3] Նույն տեղում:

[4] **Norris P.,** Introduction: The Growth of Critical Citizens, *Critical Citizens: Global Support for Democratic Government,* Oxford University Press, 1999, pp. 1-27.

[5] **Martinez Ramos J.,** Populism and Civic Culture: Insights from Latin America, 2016, https://usal.academia.edu/juliantropo, 7.11.2017

բացահայտվում են ամբողջատիրական և ավտորիտար խոսույթների տարածական և ժամանակային համընդհանուր բնութագրերը:[6]

Ամբողջատիրական խոսույթը հիմնվում է պատերնալիզմի, ճոռոմաբանության (declamation), քաղաքական իրավիճակի գիտակցված մանիպուլյատիվ կառուցման վրա: Սովորաբար ամբողջատիրական խոսույթը հաղորդում է միակողմանի «վերից վար» իմաստաբանություն, ինչը հրահրում է լսարանի բուռն արձագանքը՝ նեղացնելով հաղորդակցության շրջանակները դեպի մենախոսություն: Ամբողջատիրական խոսույթի բանալի բառերը գործում են որպես ազդանշաններ: Այսպիսի խոսույթը հավելյալ սպառնալիք է առաջ քաշում՝ ձևավորելով զանգվածային ամբողջատիրական մտածելակերպ:[7]

Մարիա Վասկես Սեմադենին քաղաքական մշակույթը սահմանում է «որպես խոսույթների և խորհրդանիշների ամբողջության պրակտիկա, որի միջոցով առանձին անհատներ կամ քաղաքական խմբեր մշակում են իշխանության նկատմամբ իրենց վերաբերմունքը, ձևավորում են իրենց քաղաքական պահանջները և դրանք դարձնում օրակարգ»[8], ինչը պայմանավորում է քաղաքական վարչակարգի կերպը:

Հետազոտելով հետխորհրդային շրջանում ամբողջատիրական խոսույթից տեղեկատվական խոսույթի անցման ռումինական փորձը՝ Լումինիտա Ռոսկան հանգում է այն եզրակացության, որ ռումինական լրատվամիջոցներում հետամբողջատիրական խոսույթն իրենից ներկայացնում է քարոզչության և տեղեկատվության միջև հիբրիդային դրսևորում, որտեղ դեռևս պահպանված են նախկին՝ խորհրդային շրջանի «մնացուկները», սակայն միևնույն ժամանակ նաև առկա են այդ

---

[6] Totalitarian and Authoritarian Discourses: A Global and Timeless Phenomenon? (ed. by Lutgard Lams, Geert Crauwels, and Henrieta Anisoara Serban), Peter Lang AG, 2013.

[7] **Gronskaya N., Zusman V.G., Batishcheva T. S.** Totalitarian Language: Reflections of Power (Russian, German, Italian Case Studies), *Paola B. Helzel and Arthur J. Katolo (eds.), Autorità e crisi dei poteri,* Padova: cedam, 2012, pp. 277–290, p. 288, https://www.hse.ru/mirror/pubs/lib/data/access/ram/ticket/48/15162954439356542a549843a8f82275d3dc089930/text.pdf, 17.01.2017

[8] **Vázquez Semadeni M. E.,** La formación de una cultura política republicana: El debate público sobre la masonería. México, 1821-1830. Serie Historia Moderna y Contemporánea/Instituto de Investigaciones Históricas, núm. 54. México: Universidad Nacional Autónoma de México/El Colegio de Michoacán. 2010.

ամենը ազատական լրատվության շրջանակներում տեղավորելու ջանքեր:[9]

Քաղաքական վարչակարգի խոսութային առանձնահատկությունների բացահայտման համար հարկավոր է հաշվի առնել քաղաքական մշակույթի երեք բնորոշիչները՝ ճանաչողական, աֆեկտիվ և գնահատողական տարրերը, որտեղ ճանաչողականը ներառում է քաղաքական օբյեկտների իմացությունը՝ ինչպես է աշխատում ողջ քաղաքական համակարգը, ովքեր են առաջնորդները և որոնք են քաղաքականության մեջ առկա արդի խնդիրները: Աֆեկտիվ տարրերը ներառում են քաղաքական օբյեկտների նկատմամբ կապվածության, մերժողականության, ներգրավվածության և այլ զգացումներ: Խոսքը վերաբերում է քաղաքական համակարգին օտարվածությանը կամ դրա հետ դրական ինքնանույնականացմանը որպես մեկ ամբողջություն: Գնահատողական տարրերը ներառում են դատողություններ և կարծիքներ քաղաքական օբյեկտների վերաբերյալ:[10] Այս ամենը դրսևորվում է քաղաքական վարքագծում և հետևապես՝ բնորոշում այն վարչակարգը, որտեղ վերը նշված տարրերը մեկը մյուսի նկատմամբ դառնում են առավելապես ընդունելի և կիրառելի քաղաքական գործընթացում:

Ամբողջատիրական խոսույթի վերլուծությունը մեծապես հիմնված է ամբողջատիրական վարչակարգերում գործածվող լեզվի առանձնահատկությունների ուսումնասիրության վրա, ինչը քաղաքագիտական գրականության մեջ հիմնականում ներառում է ֆաշիստական, ազգային-սոցիալիստական (նացիստական) և ռազմական-բյուրոկրատական (կոմունիստական) վարչակարգերը: Այս առումով ուշագրավ է Բեատրիս Տյուրպենի՝ ամբողջատիրական խոսույթի հետազոտությունը, որտեղ հեղինակն առանձնացնում է այդ խոսույթին բնորոշ հատկանիշները՝

- ամբողջատիրական խոսույթը կլանում է տեղեկատվության բոլոր աղբյուրները,

---

[9] **Rosca L.**, From the Totalitarian Language to the Informative Discourse. A Romanian Media Discourse Analysis During '90s., *Revista română de sociologie, serie nouă*, anul XXIV, 1–2, 2013, 21–39.

[10] **Vujčić V.,** Dimenzije političke culture, *Politička misao : časopis za politologiju,* **35**,1, Ožujak 1998, 119-137.

- այն կլանում է ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր ոլորտները,
- այս լեզուն «սարսափելի գերիշխանություն է»[11],
- այս լեզուն կապված է բռնության և մահվան հետ «այս լեզվից արյան հոտ է գալիս»[12],
- այս լեզուն հակապատմական է, ամբողջությամբ գաղափարախոսական,
- այս լեզվում ենթական զեղչված է, այսինքն՝ անհատը վերածվում է «անասնագլխի»[13],
- այս լեզուն առեղծվածային է:[14]

Վերը նշված բնորոշումներն ամբողջացնում են ամբողջատիրական խոսույթի պատկերը որպես իշխանության կողմից իր ենթականերին՝ ժողովրդին, լիակատար ճնշման և հնազանդեցման գործիք:

Ըստ Ժան Պեյտարի՝ ամբողջատիրության խոսույթը հանգեցնում է մտքի մեխանիկականացման:[15]

Ըստ Լե Բոննի՝ամբոջատիրության խոսույթն առանձնանում է նաև ամբոխին հավաքագրելու իր բացառիկ խոսքային հատկանիշներով՝ այդ գործընթացում կիրառելով հետևյալ գործոնները՝ խոսքի հաստատականություն, կրկնություն, պարզեցում, ստանդարտացում, հուզականացում:[16] Խոսքային գործընթացի այս հաջորդական փուլերն ամբողջատիրական գաղափարախոսությունն ուղղորդում են դեպի հասցեատիրոջ գիտակցություն և նրան պարտադրում համապատասխան քաղաքական վարքագիծ:

Խնամքով ընտրված բառը կամ հաճախակի կրկնվող բանաձևերն ունեն մեծ, ազդեցիկ ուժ:[17] Բառերի ուժն այնքան մեծ է, որ ճիշտ ընտրված եզրույթներն արդեն իսկ բավարար են ամենազգրելի

---

[11] **Klemperer V.,** LTI, la langue du Troisième Reich. Carnets d'un philologue. Paris, 1996, p. 34.

[12] Նույն տեղում:

[13] Նույն տեղում, էջ 49:

[14] **Turpin B.,** Le langage totalitaire au prisme de l'analyse de discours, *Actes du Colloque Miroir,* 2012 pp. 231-248, p. 245.

[15] **Peytard J.,** Mikhaïl Bakhtine : dialogisme et analyse du discours. Paris : Bertrand-Lacoste, 1995, 128 p.

[16] **Le Bon G.,** Psychologie des foules. Paris : Alcan, 1895, p. 73.

[17] **Turpin B.,** նշվ. աշխ.

բաներն ընդունելի դարձնելու համար: Այս պարագայում նույնիսկ բանականությունը և փաստարկները չեն կարող պայքարել որոշ բառերի և բանաձևերի դեմ:[18]

Ամբողջատիրական խոսույթը ճնշում է դիալեկտիկան և հակասացությունը: Միայն մեկ ձայն պետք է լսելի լինի: Ամբողջատիրությունը վերացնում է ցանկացած այլ կուսակցություն և ընդդիմություն:[19] Ամբողջատիրական խոսույթում իր ուրույն տեղն ու դերն ունի նաև բացասական պաթոսը: Անկախ իր հիմքերից, ամբողջատիրական խոսույթը կարող է հասկացվել որպես տիրապետություն, ինչը հակադրվում է սոցիալական երկխոսությանը՝ բացառելով մնացյալ բոլոր արժեքները, բացի սեփականից: Այս հանգամանքը հիմնվում է այն բանի վրա, որ «բոլոր փաստարկները կասկածի նշան են[20]: Այսպիսի խոսույթը չի փնտրում փաստարկներ. այն ներկայացնում է կարծիքները որպես փաստեր՝ ձևացնելով, թե դրանց անհրաժեշտությունը չկա, քանի որ ամեն ինչ այնքան ակնհայտ է: 1940-1990-ականներին որոշ երկրների՝ «ժողովրդական ժողովրդավարություններ», Խորհրդային Միություն, Հյուսիսային Կորեա և Կուբա, առաջնորդների այսկերպ խոսույթների վերլուծությունը ցույց է տվել դրանց թեմատիկ և ոճաբանական միատարրությունը, որոնց առավել բնորոշ հատկանիշը որոշակի հուզական բովանդակության առկայությունն է: Այդ խոսույթներում նկատվել են գործող վարչակարգի գովերգում և այլ վարչակարգերի նկատմամբ բացասական քարոզչություն:[21] Ըստ Ա. Կացպշակի, ամբողջատիրական գաղափարախոսությունները, հիմնվելով կոնֆլիկտի վրա, անշեղորեն հակված են բացասական պաթոսի գործածությանը, ինչը դրսևորվում է առանձին լեզվական միջոցներում:[22]

---

[18] **Le Bon G.,** նշվ. աշխ., էջ 62, էջ 60.

[19] **Turpin B.,** նշվ. աշխ.

[20] **Perelman Ch., Obrechts-Tyteca L.,** La nouvelle rhétorique, Traité de l'argumentation, Bruxelles : Éditions de l'Université de Bruxelles, 1988, p. 635.

[21] **Tappolet Ch**., Émotions et valeurs, *Collection «Philosophie morale»,* Paris, 2000.

[22] **Kacprzak A.,** Le pathos négatif en tant que trait du discours politique totalitaire, *Argumentation et Analyse du Discours* [En ligne], 10, 2013, mis en ligne le 10 avril 2013, consulté le 21 novembre 2017, http://aad.revues.org/1427 ; DOI : 10.4000/aad.1427, 14.12.2017

Մերինովը, վերլուծելով խորհրդային խոսույթը, նշում է, որ ամբողջատիրական խոսույթին կարող են հատուկ լինել նաև կեղծ ժողովրդավարական տարրերը: Հիմնվելով ԽՍՀՄ-ի օրինակի վրա՝ հետազոտողն իրավացիորեն նշում է, որ նույնիսկ այս պետության անվանման մեջ առկա ժողովրդավարական հասկացությունները՝ *խորհուրդ, սոցիալիզմ, հանրապետություն, միություն*, գործնականում ամբողջությամբ հակասում էին ժողովրդավարությանը: Բազմաթիվ էին նաև այն պետական ինստիտուտները, որոնք, ըստ էության, լինելով ժողովրդավարական հասկացություններ, ինչպես օրինակ՝ *արհմիությունը, ընտրությունը, կոլեկտիվ տնտեսությունը* և այլ, չէին համապատասխանում իրենց իրական իմաստաբանությանը: Դրանք իրականում կեղծ էին, քողարկում էին իրականությունը, հետևապես՝ այդ հասկացությունները բնորոշող քաղաքական խոսույթը կեղծ ժողովրդավարական էր: Օրինակ՝ «հողը գյուղացուն, գործարանը բանվորին» կարգախոսները կեղծ էին, քանի որ գյուղացին հողատեր չէր, հողը հանրային սեփականություն էր, ինչպես և գործարանը: Բանվորները և գյուղացիները զրկված էին տնտեսական գործընթացների վրա որևէ ազդեցություն ունենալուց: Ընտրությունները վերածվել էին միակ թեկնածուի օգտին քվեարկության: Ցույցերը բացառապես ուղղված էին գործող քաղաքական համակարգի պաշտպանությանը և զանգվածային աջակցությանը, ժողովրդի և կուսակցության միջև միասնությանը և փոխնվիրվածությանը: Խոսքի և իրականության միջև տարածությունն այնքան մեծ էր, որ որոշ դեպքերում անհրաժեշտ էր լինում հստակեցնել հասկացությունները:[23]

Ըստ Հ. Արենդտի, ամբողջատիրությունը ոչ թե ձգտում է մարդկանց նկատմամբ բռնապետական տիրապետության, այլ այնպիսի համակարգի սահմանմանը, որտեղ մարդիկ ընդհանրապես անպետքական են: Ամբողջական իշխանության կարելի է հասնել և հետո այն պահպանել միայն պայմանական ռեֆլեքսների աշխարհում՝ խամաճիկների աշխարհում, որտեղ մարդիկ զրկված են կամարտահայտման նվազագույն նախանշաններից:[24]

---

[23] **Меринов В.,** Псевдодемократическая лексика в советском тоталитарном (политическом) дискурсе, *Современный дискурс-анализ*, 14, 2016, http://www.discourseanalysis.org/ada14/st94.shtml , 04.11.2017

[24] **Арендт Х.,** Истоки тоталитаризма, М.: ЦентрКом, 1996. с. 150.

Աբողջատիրական խոսույթին հատուկ բառերը բովանդակում են հիմնականում հավերժության իմաստաբանություն: Ամբողջատիրական խոսույթում տիրապետող ընդհանուր գործածական բառերն են՝ *երբեք, ընդմիշտ, հավերժ, հարատև, առհավետ, անվերջ, անմահ, անփոխարինելի, անփոփոխելի, բացարձակ, անձեռնմխելի, անկասելի, անդիմադրելի, անդառնալի, չոչնչացվող, աներեր, փառահեղ և այլն*[25]*:*

Վերը նշված բոլոր բառերը իմաստաբանական նշանակությամբ տեղավորվում են Մուսոլինիի՝ ամբողջատիրության հետևյալ բանաձևի շրջանակներում. «Ամեն ինչ պետության ներսում, ոչինչ պետությունից դուրս, ոչինչ պետության դեմ»[26]:

Ինչ վերաբերում է ավտորիտար վարչակարգերի խոսութային առանձնահատկություններին, ապա այս դեպքում հաճախ գործածվում է կեղծ բազմակողմ խոսույթ կամ դրա նմանակում, որը բովանդակում է և՛ ամբողջատիրությանը, և՛ ժողովրդավարությանը հատուկ բառապաշար: Տարբերությունն այն է, որ ավտորիտար վարչակարգի կողմից շրջանառվող «ժողովրդավարական խոսույթը» մեծ մասամբ չի համապատասխանում քաղաքական պրակտիկային[27], իսկ հուզական խոսույթի գործածությունն անհրաժեշտ է լինում ժողովրդին վերահսկելիության շրջանակներում պահելու համար: Հաճախ ստեղծվում է նաև արտաքին թշնամու կերպար՝ որպես պետականությանը արտաքին սպառնալիք, որի դեմ ժողովրդի համախմբումը դառնում է գործող վարչակարգի պահպանման և շարունակականության կարևոր երաշխիք: Այդ բոլոր ազդեցությունները միջնորդավորվում են քաղաքական խոսույթով:

Ավտորիտար և ժողովրդավարական խոսույթներում տիրապետող ընդհանուր գործածական բառերը գրեթե նույնն են իրենց իմաստաբանությամբ: Սակայն հարկ է նշել, որ ավտորիտար վարչակարգում գործածվող խոսույթն ընդհանուր առմամբ տարբերվում է քաղաքական պրակտիկայից՝ քաղաքական խոսքն ու գործը հիմնականում կարող են չլինել նույնական:

---

[25] Dámaso F., "Heavyweight" Words in the Totalitarian Lexicon. http://cubademocraciayvida.org/web/print.asp?artID=32492, 11.11.2017

[26] **Mussolini B.,** All within the state, nothing outside the state, nothing against the state. https://www.brainyquote.com/quotes/benito_mussolini_109829, 05.11.2017

[27] **Օրդուխանյան Է.,** նշվ. աշխ.

Եթե ամբողջատիրության խոսույթին հատուկ է մենախոսական բնույթը՝ հագեցած պաթոսով և հուզականությամբ, որտեղ խոսույթի հասցեատերը՝ ժողովուրդը, զուտ ազդվող օբյեկտ է և չի կարող իրական երկխոսության, առավել ևս՝ հակասության մեջ մտնել պաշտոնական խոսույթի հետ, ապա ավտորիտար խոսույթը մեծապես կրում է կեղծ բազմակողմ կամ իմիտացիոն բնույթ, որտեղ շրջանառվող խոսույթն ու քաղաքական պրակտիկան տարբերվում են միմյանցից: Մինչդեռ ժողովրդավարական խոսույթը հիմնականում համապատասխանում է քաղաքական պրակտիկային և հիմնվում է քաղաքական տարբեր դիրքորոշումների համաձայնեցման ձգտումի վրա, ինչը ենթադրում է իրական բազմակողմ կոնսենսուս:

Վերն ուսումնասիրված տեսությունները և տարբեր երկրների դեպքերը ցույց են տալիս, որ քաղաքական մշակույթի և վարչակարգերի գնահատման և դասակարգման վերաբերյալ դասական մոտեցումները մեծապես հիմնվում են սոցիոլոգիական մեթոդների վրա՝ հարցում, հարցազրույց, անկետավորում և այլն: Սակայն հասարակական գործընթացների վրա նոր աշխարհակարգի ձևավորման համար մրցակցության զգալի ազդեցությունը, ինչպես նաև ժամանակակից ավտորիտար վարչակարգերի կողմից կեղծ ժողովրդավարական խոսույթի հաճախակի օգտագործումը պահանջում են վարչակարգերի գնահատման մեխանիզմների կատարելագործում՝ ավելի ճշգրիտ արդյունքներ ապահովելու նպատակով: Հետևապես՝ դասական մեթոդները չեն կարող լիարժեքորեն բավարարել արդի իրավիճակի պահանջներին: Արդյունքում՝ անհրաժեշտություն է առաջանում մշակել նոր, այլընտրանքային մոտեցումներ, որոնք հնարավորություն կտան արդի հասարակական-քաղաքական երևույթներն ու գործընթացները դիտել ավելի լայն սպեկտրով, մասնավորապես, քաղաքական մշակույթի ուսումնասիրության հիման վրա: Իսկ այդպիսի մեթոդ կարող է լինել քաղաքական մշակույթի խոսութային չափումը, քանի որ խոսույթն այն տարրն է, որն առկա է յուրաքանչյուր քաղաքական մշակույթում:

Քաղաքական մշակույթի խոսութային չափման (ՔՄԽՉ) մեթոդը

Առաջարկվում է քաղաքական մշակույթի գնահատման համար օգտագործել Քաղաքական մշակույթի խոսութային չափումը (ՔՄԽՉ), որը քանակական հետազոտության մեթոդ է և հնարավորություն է տալիս որևէ պետության ներսում շրջանառվող քաղաքական խոսույթի առանձնահատկությունների բացահայտման և վերլուծության արդյունքում գնահատել քաղաքական մշակույթում առկա տիրապետող տարրերը և դրանք դիտելով քաղաքական վարչակարգի համատեքստում, բնորոշել վարչակարգի տեսակը:

Քաղաքական մշակույթի խոսութային վերլուծությունը ներառում է քաղաքական գիտակցության մշակույթի, քաղաքական վարքագրծի մշակույթի և քաղաքական ինստիտուտների գործառնության մշակույթի տարրերը:

Մեթոդի ճշգրտությունը ստուգվել է այլ մեթոդներով իրականացված քաղաքական վարչակարգերի գնահատման հետազոտությունների արդյունքների հետ համեմատության միջոցով:

Որպես ՔՄԽՉ մեթոդով չափման *էմպիրիկ հիմք՝* ներքաղաքական խոսույթում պետք է առանձնացնել պետության կարևորագույն ներկայացուցչական ինստիտուտների կողմից որոշակի ժամկետում (նախընտրելի է առնվազն մեկ տարվա) շրջանառվող քաղաքական տեքստերը՝ ներառելով առանցքային քաղաքական գործընթացները (օրինակ՝ ընտրություններ): Մասնավորապես, խոսութային վերլուծության օբյեկտ կարող են լինել նախագահի, խորհրդարանի ներկայացուցիչների (իշխանական և ընդդիմադիր), նախընտրական քարոզարշավի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության քաղաքական բովանդակությամբ տեքստերը՝ որպես ներպետական բազմակողմ՝ իշխանություն-ընդդիմություն-հասարակություն խոսույթի հավաքական ամբողջություն:

Քաղաքական մշակույթի խոսութային չափումը ենթադրում է իրարահաջորդ մի քանի քայլերի կիրառում՝ ամբողջ հետազոտական գործընթացը բաժանելով հինգ փուլի՝

- *Առաջին փուլում* անհրաժեշտ է հավաքել էմպիրիկ տվյալներ (քաղաքական տեքստեր),

- *Երկրորդ փուլում* համապատասխան տեքստերի ուսումնասիրության արդյունքում անհրաժեշտ է կազմել խոսույթի իմացական (կոգնիտիվ) քարտեզը[28],
- *Երրորդ փուլում* խոսույթի իմացական քարտեզը անհրաժեշտ է վերլուծել խոսույթի քննադատական վերլուծության (ԽՔՎ) մեթոդով[29],
- *Չորրորդ փուլում* ստացված արդյունքները, որոնք արդեն իսկ ունեն թվային արտահայտություն, չափվում են ՔՄԽՉ բանաձևով:
- *Հինգերորդ փուլում* անհրաժեշտության դեպքում չափման արդյունքների հավատարժանու-թյունը կարելի է ստուգել՝ այն համեմատելով քաղաքական վարչակարգերի գնահատման միջազգային հանրահայտ ինդեքսների հետ (օրինակ՝ Freedom House[30], EIU Democracy Index[31]):

ՔՄԽՉ մեթոդով քանակական չափման համար առանձնացվում են քաղաքական խոսույթի կարևորագույն բովանդակային վեց տարրեր՝ որպես փոփոխականներ՝

Փ1 (*Հանդուրժողականություն):* Այս փոփոխականի շրջանակներում պետք է պարզել, թե որքանով է խոսույթում խրախուսվում քաղաքացիների և քաղաքական ուժերի միջև միմյանց նկատմամբ զուսպ, հավասարակշռված, հանդուրժողական վերաբերմունքը, շեշտադրում իշխող ուժի գերակայությունը և բացարձակացումը, քաղաքական առաջնորդի անփոխարինելիությունը: Փոփոխականը գնահատվում է {0;1} միջակայքում:

Փ2 (*Աջակցություն քաղաքական համակարգին):* Այս փոփոխականի շրջանակներում պետք է պարզել, թե որքանով և ում կողմից է

---

[28] **Ордуханян Э.,** Политический дискурс как средство политической коммуникации/ Философия, политика, культура, *Материалы летней школы молодого философа*, Прогресс-Традиция, Москва, 2011, сс. 222-236.

[29] **Fairclough N., Wodak R.,** Critical discourse analysis. Glasgow University Media Group, 1980; **T. A. van Dijk** (ed.), Discourse Studies. More Bad News. London: Routledge A Multidisciplinary Introduction, Vol. 2, 1980; **Kegan Paul**. Discourse as Social Interaction Glasgow University Media Group. 1982, pp. 258-284.

[30] Freedom House, https://freedomhouse.org/

[31] EIU Democracy Index, https://www.eiu.com/topic/democracy-index

խոսույթում խրախուսվում, արդարացվում գործող քաղաքական համակարգը, իրականացվող քաղաքականությունը, ժողովրդավարական արժեհամակարգը, որքանով են խոսույթում սահմանափակվում քաղաքական իշխանության նկատմամբ այլ ուժերի ձգտումները: Փոփոխականը գնահատվում է {0;1} միջակայքում:

Փ3 (*Քաղաքական մասնակցություն):* Այս փոփոխականի շրջանակներում պետք է պարզել, թե որքանով և ում կողմից է խոսույթում խրախուսվում քաղաքացիների մասնակցությունը քաղաքական կյանքին, ինչպիսի մասնակցություն է խրախուսվում՝ դրական, թե բացասական: Փոփոխականը գնահատվում է {0;1} միջակայքում:

Փ4 (*Ինտերակցիա):* Այս փոփոխականի շրջանակներում պետք է պարզել, թե ինչպիսին է խոսույթի մասնակիցների բազմազանությունը, ինչպիսին է խոսույթի բնույթը՝ մենախոսություն, թե երկխոսություն, միակողմանի, բազմակողմ, թե կեղծ բազմակողմ, արդյունավետ, թե ոչ արդյունավետ: Փոփոխականը գնահատվում է {0;1} միջակայքում:

Փ5 (*Կառուցողականություն և փաստարկվածություն):* Այս փոփոխականի շրջանակներում պետք է պարզել, թե որքանով է խոսույթը կառուցողական կամ ապակառուցողական, կոնֆլիկտային է, թե ոչ, արդյոք այն ուղղված է կողմերի միջև կոնֆլիկտի խորացմանը, թե զսպմանը, կոնսենսուսին: Պետք է պարզել, թե որքանով է խոսույթը փաստարկված, որքանով է այն հիմնվում իրական փաստերի վրա, որքանով են կարծիքները ներկայացվում որպես փաստեր, արդյոք դրանք համապատասխանում են իրականությանը, որքան է խոսույթը ներազդված պաթոսով և պոպուլիզմով: Փոփոխականը գնահատվում է {0;1} միջակայքում:

Քաղաքական խոսույթի վերլուծության հիման վրա վարչակարգերի գնահատման վերաբերյալ մի շարք աշխատանքների[32] ուսումնա-

[32] **Jie Lu, Tianjian Shi.,** The Battle of Ideas and Discourses before Democratic Transition: Different Democratic Conceptions in Authoritarian China, *International Political Science Review*, January 2015, **36**, 1, 20-41; **Johnson David W. and Johnson Roger T.,** Civil Political Discourse In A Democracy: The Contribution of Psychology, *Peace & Conflict: Journal of Peace Psychology*, 6(4), 2000, 291-317; **Wilson S.,** A Review of Authoritarian Rule of Law: Legislation, Discourse and Legitimacy in Singapore by Jothie Rajah, *Indiana Journal of Global Legal Studies*, 21, 1, 2014, 297-301; **Lewis D.,** Civil Society and the Authoritarian State: Cooperation, Contestation and Discourse, *Journal of Civil Society*, **9**, 3, 2013, 325-

սիրությունը թույլ է տվել ձևակերպել քաղաքական խոսույթի բովանդակության և վարչակարգերի տեսակների համապատասխանության երեք խմբեր՝

- եթե քաղաքական խոսույթը միակողմանի է, մենախոսական, առանց ինտերակցիայի և ունի հարկադրական բնույթ, ապա այն ամբողջատիրական է, ինչը ենթադրում է նահապետական և հպատակային քաղաքական մշակույթ (ամբողջատիրական վարչակարգ),
- եթե քաղաքական խոսույթը հիմնված է կեղծ բազմակարծության, կեղծ ինտերակցիայի վրա, որտեղ իրական քաղաքականությունը տարբերվում է ներկայացվող խոսույթից, ապա այն ավտորիտար է և ենթադրում է հպատակային կամ կեղծ մասնակցային քաղաքական մշակույթ (ավտորիտար վարչակարգ),
- եթե քաղաքական խոսույթը հիմնված է բազմակարծության, կառուցողականության վրա և տեղի է ունենում բազմակողմանի հաղորդակցությամբ, որի դեպքում գործնական քաղաքականությունը համապատասխանում է քաղաքական խոսույթին, ապա այն ժողովրդավարական է և ենթադրում է քաղաքացիական և մասնակցային քաղաքական մշակույթ (ժողովրդավարական վարչակարգ):[33]

Հիմք ընդունելով վերը բերված դասակարգումը՝ վերոհիշյալ երեք խմբերն իրենց հերթին բաժանվել են հինգ ենթախմբերի, ինչը հնարավորություն է տվել մանրամասնել քաղաքական վարչակարգերի դասակարգումը և մեծացնել գնահատման ճշգրտությունը ՔՄԽՉ մեթոդով չափման շրջանակներում:

340; **Lams L., Crauwels G., Şerban H.,** Totalitarian and Authoritarian Discourses: A Global and Timeless Phenomenon? Oxford, Bern, Berlin, Bruxelles, Frankfurt am Main, New York, Wien, 2014, 349 p.; **Hall S.,** Can Authoritarian Regimes Learn? The cases of Belarus, Kazakhstan, Russia and Ukraine, University of Birmingham, 2014, http://etheses.bham.ac.uk/5502/;10.12.2017; **Коровкова О.,** «Свои чужие» в дореволюционном политическом дискурсе большевиков и советском тоталитарном дискурсе, *Политическая лингвистика,* 4, 2011, http://cyberleninka.ru/article/n/svoi-chuzhie-v-dorevolyutsionnom-politicheskom-diskurse-bolshevikov-i-sovetskom-totalitarnom-diskurse#ixzz3XZT0GPsy, 02.11.2017

[33] **Օրդուխանյան Է.**, նշվ. աշխ.

Ըստ ՔՄԽՉ մեթոդի՝ քաղաքական վարչակարգը գնահատվում է 0-5 միավորանոց սանդղակով: Որքան 5-ին մոտ է ցուցանիշն, այնքան ավելի ժողովրդավարական է վարչակարգը և առկա է մասնակցային-քաղաքացիական մշակույթ: Վարչակարգերի վերոհիշյալ հինգ ենթախմբերին համապատասխանող թվային միջակայքերը հետևյալներն են՝

{0<‹Φ≤1} միջակայք՝ բացարձակ միակողմանի խոսույթ, տիրապետող նահապետական, հպատակային քաղաքական մշակույթ, ամբողջատիրական վարչակարգ,

{1<Φ≤2} միջակայք՝ միակողմանի կամ կեղծ բազմակողմ խոսույթ, տիրապետող հպատակային քաղաքական մշակույթ, կայուն ավտորիտար վարչակարգ,

{2<Φ≤3} միջակայք՝ թույլ (ոչ կառուցողական, ոչ արդյունավետ) բազմակողմ խոսույթ (կամ բազմակողմ խոսույթի իմիտացիա), հպատակային և թույլ (ոչ արդյունավետ) մասնակցային քաղաքական մշակույթ, կիսաավտորիտար կամ հիբրիդային վարչակարգ,

{3<Φ≤4} միջակայք՝ լիարժեք բազմակողմ խոսույթ, մասնակցային և քաղաքացիական մշակույթ, կիսաժողովրդավարական վարչակարգ,

{4<Φ≤5} միջակայք՝ կայուն, կառուցողական արդյունավետ բազմակողմ խոսույթ, կայուն քաղաքացիական մշակույթ, կայացած ժողովրդավարական վարչակարգ:

Հարկ է նշել, որ քաղաքական վարչակարգերի առաջարկվող դասակարգումը հինգ խմբերի պայմանավորված է մասնագիտական գրականության[34] և միջազգային պրակտիկայում վարչակարգերի դասակարգման ընդհանուր տրամաբանությամբ: Օրինակ՝ Ազատության Տունը քաղաքական վարչակարգերը դասակարգում է հինգ խմբերի՝ *կայուն ավտորիտար վարչակարգ, կիսակայուն ավտորիտար վարչակարգ, անցումային կառավարություն կամ հիբրիդային վարչա-*

[34] **Ishiyama John T., Breuning M.,** 21st Century Political Science. A Reference Handbook, Sage Pub., 2011; **Hix S., Whiting M.,** Introduction to Political Science, University of London 2012; **Heywood A.,** Politics, Fourth edition, Macmillan Publishers 2013; The Oxford Handbook of Political Science, Edited by **Robert E. Goodin**, 2011; **James A. Medeiros, Robert L. Cord, Michael G. Roskin**, Political Science: An Introduction, Kindle Edition, 2013

կարգ, կիսակայուն ժողովրդավարություն և կայուն ժողովրդավարություն:[35] Այս պարագայում որպես առանձին վարչակարգի տեսակ՝ դուրս է մնում ամբողջատիրական վարչակարգը, որի բնութագիրը տարբերվում է ավտորիտար վարչակարգի բնութագրից: Հետևապես՝ հաշվի առնելով այս հանգամանքը ևս՝ քաղաքական վարչակարգերի առաջարկվող դասակարգման մեջ ներառվել է ամբողջատիրական վարչակարգը՝ որպես առանձին վարչակարգ: Միաժամանակ, քանի որ կիսակայուն ավտորիտար վարչակարգը և անցումային կառավարություն կամ հիբրիդային վարչակարգը կիսաավտորիտար վարչակարգի տարատեսակներ են, վարչակարգերի բաժանման համաչափությունը պահպանելու նպատակով այդ երկուսի փոխարեն օգտագործվում է կիսաավտորիտարը:

Բոլոր հինգ փոփոխականների համար 0-1 միավորանոց միջակայքի ընտրությունը պայմանավորված է քաղաքական վարչակարգի գնահատման 0-5 միավորանոց սանդղակի հետ համամասնության պահպանման սկզբունքով: Էմպիրիկ հետազոտություններում փոփոխականների համար արժեքային հավասարաչափ միավորների միջակայքի ընտրության սկզբունքը կիրառվում է միջազգային պրակտիկայում, մասնավորապես՝ քաղաքական վարչակարգի գնահատման հանրահայտ Ազատության տան ժողովրդավարության ինդեքսում:[36] Սակայն չի բացառվում, որ երկարատև փորձարկումներից հետո, ՔՄԽՉ մեթոդով առանձնացված վեց փոփոխականների արժեքային միավորների հավասարաչափ միջակայքն անհրաժեշտության դեպքում կարող է վերանայվել:

Քաղաքական մշակույթի խոսութային չափման մեթոդաբանության մեջ քաղաքական մշակույթի և քաղաքական վարչակարգի ենթախումբը պայմանավորված է քաղաքական խոսույթում *հանդուրժողականության, քաղաքական համակարգի աջակցության, քաղաքական մասնակցության, ինտերակցիայի, կառուցողականության և փաստարկվածության* վերաբերյալ առկա դրական նշանակությամբ գործածված լեզվական իմաստային միավորների (բառ, բառակապակ-

[35] Freedom House, https://freedomhouse.org/

[36] Freedom House, Nations in Transit Ratings and Averaged Scores, Democracy Score, https://freedomhouse.org/report/nations-transit/2017/armenia, 18.12.2017

ցություն, նախադասություն) քանակի և միավորների ընդհանուր թվի հարաբերակցությամբ:

Հետազոտության համար որպես էմպիրիկ հիմք առանձնացված քաղաքական տեքստերը պետք է վերլուծել ՔՄԽՉ մեթոդով: Հետազոտվող խոսույթում համապատասխան *հինգ փոփոխական-ներից յուրաքանչյուրի համար* առանձնացվում է լեզվական իմաստային միավորների համախումբը: Դրանցից առանձնացվում են դրական և բացասական նշանակությամբ լեզվական իմաստային միավորների կիրառությունները: Այնուհետև հաշվվում է, թե դրական իմաստային միավորները ընդհանուրի որ մասն են յուրաքանչյուր փոփոխականի համար՝

$$Φ_i=ԴՄ_i/ԸՄ_i, \text{ որտեղ } i=\{1, 2, 3, 4, 5\},$$

ԴՄ-ն դրական լեզվական իմաստային միավորների քանակն է, ԸՄ-ն՝ ընդհանուր լեզվական իմաստային միավորների քանակը: Իսկ կոնկրետ խոսույթի համաթիվը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\mathbf{Φ}=Φ_1+Φ_2+\ldots+Φ_5=\sum_{i=1}^{5}Φ_i \ :$$

ՔՄԽՉ մեթոդի կիրառումը ՀՀ-ում քաղաքական վարչակարգի գնահատման համար

Հետխորհրդային տրասնֆորմացիայի շրջանակներում նախկին խորհրդային երկրների հասարակական և քաղաքական համակարգե-րի զարգացումը տեղի է ունենում տարուղղորդված՝ բազմավեկտոր ուղիներով:

Այս տեսանկյունից Տ. Թորոսյանը և Հ. Սուքիասյանը իրավամբ առանձանցրել են հետխորհրդային պետությունների երեք խումբ, որտեղ առաջին խմբում ընդգրկված են ամուր ժողովրդավարություն ձևավորված հետխորհրդային երկրները: Երկրորդ՝ «սպասման խմբում» այն երկրներն են, որոնք դեռ քաղաքակրթական, ինտեգրացիոն

ընտրության առջև են կանգնած: Եվ երրորդը հեղինակներն անվանել են կոշտ ավտորիտարիզմի կամ ամբողջատիրության խումբ:[37]

Հարկ է նշել, որ առաջին և երրորդ խմբերի երկրների համար հետխորհրդային տրանսֆորմացիան երկրորդ փուլով համարվում է ավարտված, իսկ երրորդ փուլը կարող է դիտարկվել միայն «սպասման» խմբի երկրների համար, որտեղ ներառված է նաև Հայաստանը:[38] Հետևապես՝ Հայաստանը դեռևս շարունակում է կանգնած մնալ քաղաքական վարչակարգի ճշգրտման երկընտրանքի առջև: Եվ այս տեսանկյունից ՀՀ-ում քաղաքական մշակույթի խոսութային չափման միջոցով վարչակարգի գնահատումը դառնում է կարևոր և արդիական խնդիր:

Այս համատեքստում վերլուծության համար որպես էմպիրիկ հիմք է հանդիսացել ՀՀ-ում 2017թ. ներքաղաքական խոսույթը: Հետազոտության համար առանձնացվել են ՀՀ Նախագահի պաշտոնական ելույթները, հարցազրույցներն ու մամլո ասուլիսները[39]: Որպես առանցքային քաղաքական գործընթացի արդյունք առանձնացվել է 2017թ. ՀՀ ԱԺ նախընտրական խոսույթը, ՀՀ 6-րդ գումարման ԱԺ-ում խորհրդարանական խոսույթը (2017թ. նիստերի սղագրություններ[40])՝ իշխանական և ընդդիմադիր գործիչների ելույթներ, կառավարության հետ հարց ու պատասխան, ինչպես նաև 2017 թ. առավել հայտնի քաղաքացիական նախաձեռնությունների խոսույթը (Զինապարտության մասին օրենքում տարկետման իրավունքի կիրառման ձևի փոփոխության դեմ ուսանողական պայքարը «Տարկետում լինելու է»[41] նշանաբանով): Քաղաքացիական նախաձեռնությունների խոսույթի վերլուծությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ

---

[37] **Թորոսյան Տ., Սուքիասյան Հ.,** Հետխորհրդային տրանսֆորմացիայի երեք փուլերը, երեք խմբերը և երեք հարացույցները, *Հայկական Քաղաքագիտական Հանդես*, 1(1), 2014, 19-32:

[38] Նույն տեղում:

[39] ՀՀ նախագահի ելույթներ, հարցազրույցներ ու մամլո ասուլիսներ (2017թ.), http://www.president.am/hy/statements-and-messages/; http://www.president.am/hy/interviews-and-press-conferences/, 24.12.2017

[40] **ՀՀ** ԱԺ նիստերի սղագրություններ (2017թ.): http://parliament.am/transcript.php?lang=arm , 25.12.2017

[41] Տարկետում լինելու է: https://www.azatutyun.am/a/28870098.html, 15.02.2018

խոսույթը քաղաքական ինստիտուտների համար հաճախ դառնում է օրակարգային՝ խթանելով կողմերի միջև ինտերակցիան և երկխոսությունը:

Վերը նշված էմպիրիկ նյութերի վերլուծության արդյունքում՝ կազմվել է 2017թ. ՀՀ-ում ներքաղաքական խոսույթի՝ աղյուսակ 1-ում բերված իմացական քարտեզը:

Աղյուսակ 1

	Լեզվական իմաստային միավորների քանակը		
Փոփոխականներ	Դրական միավորներ (ԴՄ)	Բացասական միավորներ (ԲՄ)	Ընդհանուր միավորներ (ԸՄ)
Փ1	50	33	83
Փ2	51	56	107
Փ3	63	21	84
Փ4	54	40	94
Փ5	49	145	194

Քարտեզում բերված տվյալները թույլ են տվել թվերի տեսքով արտահայտել ներքաղաքական խոսույթի պատկերը, որտեղ նշված հինգ փոփոխականները ենթարկվել են առանձին վերլուծության՝ ԽՔՎ մեթոդով:

Փ1 ***(Հանդուրժողականություն)*** փոփոխականի համար 2017թ. ներքաղաքական խոսույթում արձանագրվվել է 83 լեզվական իմաստային միավոր, որից 50-ը եղել են դրական նշանակությամբ կիրառություններ, իսկ 33-ը՝ բացասական:

$$Փ_1=ԴՄ_1/ԸՄ_1= 50/83=0.60$$

Գծապատկեր 1



Դրական նշանակությամբ կիրառությունների տոկոսային արտահայտությունը կազմել է 0,6՝ ներքաղաքական խոսույթում հանդուրժողականության վերաբերյալ խոսքային դրական գործածությունները եղել են ավելի շատ, քան բացասականները: Խոսույթում մեծ մասամբ խրախուսվել է իշխանության, ընդդիմության, քաղաքացիների և քաղաքական ուժերի միջև միմյանց նկատմամբ ավելի զուսպ, հավասարակշռված վերաբերմունքը, թեև նկատվել են նաև անհանդուրժողականության որոշ տարրեր՝ հիմնականում ուղղված կառավարության կողմից իրականացվող քաղաքականության դեմ: Անհանդուրժողականության որոշ դրսևորումներ եղել են խորհրդարանականների միջև բանավեճերում, և երբեմն դրանք հանգել են միմյանց նկատմամբ ֆիզիկական ուժի կիրառման: Խորհրդարանական խոսույթում շատ են եղել նաև քննադատական ելույթներն ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորների կողմից, որոնցում, սակայն, մեծ մասամբ պահպանվել է հանդուրժողականությունը քաղաքական ընդդիմախոսների նկատմամբ: Որոշ դեպքերում իշխանավորների կամ իշխանության աջակիցների խոսույթում նկատվել են նաև իշխող ուժի բացառիկության, գերազանցության, անսխալականության, որպես քաղաքական մեծամասնություն՝ մշտապես ճշմարտացիության, երկրի առաջնորդի անփոխարինելիության մասին խոսքային գործածություններ: Նախագահի խոսույթում ևս գերակշռել են հանդուրժողականությանն ուղղված տարրերը: Այսպիսով՝ 2017թ. ներքաղաքական

խոսույթում ընդհանուր առմամբ խրախուսվել է հանդուրժողականությունը:

Φ2 (Աջակցություն քաղաքական համակարգին) մասով 2017թ. ներքաղաքական խոսույթում բացահայտվել է 107 լեզվական իմաստային միավոր, որից 51-ը եղել են դրական նշանակությամբ կիրառություններ, իսկ 56-ը՝ բացասական, հետևաբար՝

$$Φ2=51/107=0,48$$

Գծապատկեր 2



Դրական նշանակությամբ կիրառությունները կազմել են ընդհանուրի 0,48 մասը: Ներքաղաքական խոսույթում գործող քաղաքական համակարգի արդյունավետության վերաբերյալ դրական և բացասական խոսքային գործածությունները գրեթե հավասար են եղել: Դրական տարրերի գործածումը հիմնականում նկատվել է իշխանության ներկայացուցիչների խոսույթում, որտեղ անցումը նոր կառավարման համակարգին մեկնաբանվել է բացառապես դրական լույսի ներքո: Մինչդեռ խորհրդարանական կառավարման համակարգի վերաբերյալ խնդրահարույց, կասկածելի, թերահավատություն ներշնչող խոսքային դրսևորումներ նկատվել են խորհրդարանական ընդդիմադիրների խոսույթում: Միաժամանակ, այդ կառավարման համակարգը լիարժեք մերժելուն, տապալելուն ուղղված ելույթներ չեն արձանագրվել: Ներքաղաքական խոսույթում խրախուսվել է ժողովրդավարական արժեհամակարգը, պետական ինստիտուտների արդիականացումը՝ հիմնականում շեշտադրելով զինված ուժերի առաջնայնությունը արդյունավետացման առումով: Նախագահի խոսույթում քաղաքական համակարգի աջակցությանը, նոր կառավարման

համակարգին ուղղված խոսքային դրսևորումները եղել են բացառապես դրական լույսի ներքո: Սակայն հարկ է նշել, որ իշխանության խոսույթում սահմանափակվել են նաև իշխանության նկատմամբ այլ ուժերի ձգտումները՝ կապված համակարգի նկատմամբ անհանդուրժողական վարքագծի տարածման հետ: Արդյունքում՝ խոսքային բացասական կիրառությունները մի փոքր գերազանցել են դրական գործածություններին:

Փ3 (*Քաղաքական մասնակցություն)* *փոփոխականի համար* 2017թ. ներքաղաքական խոսույթում բացահայտվել է 84 լեզվական իմաստային միավոր, որից 63-ը՝ դրական նշանակությամբ կիրառություններ, իսկ 21-ը՝ բացասական: Հետևաբար՝

Փ3 =63/84 = 0,75

Գծապատկեր 3



Ներքաղաքական խոսույթում քաղաքացիների մասնակցությունը եղել է առանցքային տարրերից մեկը: Մասնակցությունը քաղաքական կյանքին, քաղաքական գործընթացներին մեծ մասամբ խրախուսվել է ընդդիմադիր ուժերի, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից հիմնականում 2017թ. ԱԺ նախընտրական քարոզարշավի ընթացքում և որոշ քաղաքացիական անհնազանդության, բողոքի ակցիաների ժամանակ: Նախընտրական խոսույթում ծայրահեղական դրսևորումներ չեն նկատվել՝ չնայած քննադատություններին, որոնք եղել են մեծաթիվ: Այդ շրջանում ընդդիմադիրների խոսույթում խրախուսվել է քաղաքացիների ակտիվությունն ընտրություններում՝ որպես քաղաքական կյանքում դրական փոփոխությունների կարևոր նախապայման: 2017թ. ԱԺ ընտրություններին քվեարկության մասնակիցների թիվն ընտրացուցակներում

ընդգրկված քաղաքացիների թվի համեմատությամբ կազմել է 60,93%[42], ինչը պայմանավորված է եղել նաև քաղաքական ուժերի նախընտրական խոսույթի ինտենսիվությամբ: Հետընտրական շրջանում իշխանության խոսույթում նկատվել են նաև տարբեր քաղաքական ակցիաներին քաղաքացիների մասնակցության զսպմանն ուղղված խոսքային գործածություններ՝ հիմնականում սահմանված իրավակարգերը չխախտելու, ապօրինություններ չգործելու պատճառաբանությամբ, ինչը բացասաբար է ընդունվել բողոքի ակցիաների մասնակիցների կողմից: Նախագահի խոսույթում քաղաքական մասնակցության առումով մեծաթիվ խոսքային գործածություններ չեն նկատվել: Այս հարցում հիմնականում պահպանվել է խոսութային չեզոքություն: Պայմանավորված նաև երկրում ձևավորված բարդ սոցիալ-տնտեսական վիճակով՝ քաղաքական մասնակցության խթանմանն ուղղված խոսույթը եղել է ավելի գերակշռող:

Φ4 (Ինտերակցիա) *փոփոխականը* 2017թ. ներքաղաքական խոսույթում ունեցել է 94 լեզվական իմաստային միավոր, որից 54-ը եղել են դրական նշանակությամբ կիրառություններ, իսկ 40-ը՝ բացասական, հետևաբար

$$\Phi_4 = 54/94 = 0.57:$$

Գծապատկեր 4



[42] ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով: http://www.elections.am/parliamentary/

Ներքաղաքական խոսույթում ներգրավված են եղել բազմաթիվ մասնակիցներ թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր, թե՛ քաղաքացիական դաշտից: Հետևապես՝ ձևական առումով ապահովված է եղել խոսույթի մասնակիցների բազմազանությունը: Ներքաղաքական խոսույթում նկատվել են և՛ մենախոսություններ, և՛ երկխոսություններ, որտեղ իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչների՝ մեծ մասամբ նախագահի խոսույթը կրել է մենախոսական բնույթ՝ պայմանավորված նաև արարողակարգային առանձնահատկություններով: Նախագահի պարագայում երկխոսություններ եղել են հիմնականում հարցազրույցների ժամանակ: Քաղաքացիներին ուղղված նրա խոսույթը եղել է հեռակա՝ ԶԼՄ-ների միջնորդությամբ: Ինչ վերաբերում է ընդդիմադիր քաղաքական գործիչների հետ երկխոսությանը, ապա այս հարցում նախագահը եղել է ավելի շատ պասիվ, քան ակտիվ: Այս հանգամանքը որոշակիորեն պայմանավորված է նաև նախագահի պաշտոնի առանձնահատկություններով, ինչը չի սահմանում քաղաքական դաշտում այլ քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ պարտադիր երկխոսություններ, ի տարբերություն կառավարության ներկայացուցիչների, ովքեր ԱԺ կանոնակարգ օրենքի համաձայն՝ «... յուրաքանչյուր հերթական նիստերի չորեքշաբթի օրվա վերջին հիմնական նիստում պատասխանում են պատգամավորների բանավոր հարցերին»[43]: Սա ինքնին ենթադրում է պարտադիր երկխոսություն կառավարության և խորհրդարանի միջև: Բացի խորհրդարանական հարց ու պատասխանից, որտեղ երկկողմ խոսույթի արդյունավետությունը եղել է ցածր (այսինքն՝ ընդդիմադիր պատգամավորների կողմից կառավարությանն ուղղված առաջարկների մեծ մասը չի ընդունվել կամ քննադատությունների դեպքում վերջինս ավելի շատ փորձել է արդարանալ կամ մերժել դրանք), կառավարությունը նաև երկխոսության է գնացել քաղաքացիական նախաձեռնությունների ներկայացուցիչների հետ (մասնավորապես՝ «Տարկետում լինելու է» նախաձեռնությունների ներկայացուցիչների հետ): Այդ երկկողմ խոսույթների արդյունքում բողոքող ուսանողների պահանջները չեն բավարարվել, սակայն

[43] ԱԺ կանոնակարգ ՀՀ օրենք, http://parliament.am/parliament.php?id=bylaw&lang=arm, 9.11.2017

փոխարենը նրանց առաջարկվել է մասնակցել տվյալ խնդրի հետ կապված հետագա քննարկումներին: Ընդհանուր առմամբ կառավարության խոսույթն ինտերակցիայի տեսանկյունից չի ապահովել բարձր արդյունավետություն:

Նախընտրական խոսույթում այլ քաղաքական գործընթացների համեմատ ինտերակցիան եղել է ավելի բարձր: Գրեթե բոլոր քաղաքական ուժերը հանդիպումներ են ունեցել ընտրողների հետ տարբեր բնակավայրերում: Դրանց ժամանակ ընտրողների հետ երկխոսություններում ավելի ակտիվ են եղել ընդդիմադիր քաղաքական ուժերը, որոնց խոսույթը եղել է ավելի անմիջական և հանպատրաստից: Իշխող ուժի ներկայացուցիչները քարոզարշավում ավելի շատ հանդես են եկել նախապես մշակված տեքստերով, իսկ հանրության կողմից նրանց ուղղված հարցերը չեն կրել խիստ քննադատական բնույթ, իսկ դժգոհությունները եղել են խիստ սահմանափակ: Այս հանգամանքը նաև որոշակիորեն կեղծ բազմակողմ խոսույթի առկայության մասին տպավորություն է ստեղծել: Սակայն այս ամենով հանդերձ ներքաղաքական խոսույթն իր ինտենսիվության առումով եղել է ավելի շատ ակտիվ, քան պասիվ՝ նախևառաջ պայմանավորված ընտրական տարվա հանգամանքով: Այսպիսով՝ 2017թ. ներքաղաքական խոսույթում *ինտերակցիայի ցուցանիշը 0-1 միավորանոց սանդղակում կազմել է 0,58:*

Φ5 ***(Կառուցողականություն և փաստարկվածություն)*** *փոփոխականը* 2017թ. ներքաղաքական խոսույթում ունեցել է 194 լեզվական իմաստային միավոր, որից 49-ը եղել են դրական նշանակությամբ կիրառություններ, իսկ 145-ը՝ բացասական:

$$\Phi_5=49/194= 0.25$$

Գծապատկեր 6



Դրական նշանակությամբ կիրառությունների տոկոսային արտահայտությունը կազմել է 0,25: Ներքաղաքական խոսույթում հիմնականում գերակշռել են կոնֆլիկտային դրսևորումները, որոնք, սակայն, չեն հանգել ծայրահեղ քաղաքական վարքագծի: Դրա հետ մեկտեղ կոնֆլիկտային խոսույթը, որը հիմնականում կիրառվել է ընդդիմադիր գործիչների և քաղաքացիական նախաձեռնությունների ներկայացուցիչների կողմից, ուղղված չի եղել կողմերի միջև կոնֆլիկտի խորացմանը և փոխզիջումների կամ կոնսենսուսի բացառմանը: Այն հիմնականում կրել է հավասարակշռված բնույթ, սակայն աչքի չի ընկել իր բարձր արդյունավետությամբ: Ըստ քաղաքական դաշտում զբաղեցրած դիրքի՝ կառուցողականության տարբեր նկատվել են ինչպես ընդդիմադիր, այնպես էլ իշխանական ուժերի խոսույթներում: Սակայն հարկ է արձանագրել, որ խոսութային կառուցողականությունը մեծ մասամբ չի վերածվել գործնական կառուցողականության: Օրինակ՝ խորհրդարանում ընդդիմադիր գործիչների առաջարկները հիմնականում մերժվել են կամ, եթե նույնիսկ ընդունվել են օրինագծերում, ապա հետագայում մերժվել են քվեարկության արդյունքում: Հաճախ խորհրդարանական ընդդիմությունը խորհրդարանական մեծամասնության կողմից մեղադրվել է ոչ կառուցողական քաղաքականություն վարելու մեջ: Անհրաժեշտ է ընդգծել, որ կառուցողականությունը ենթադրում է այդ գործընթացում ներգրավված բոլոր կողմերի պատրաստակամությունը ընդհանուր

նպատակներին հասնելու գործում: Այս տեսանկյունից ընդդիմադիրների խոսույթում որոշակի կառուցողական քաղաքական վարքագիծը խորհրդարանում մերժվել է հիմնականում քաղաքական մեծամասնության կողմից: Հետևապես՝ կառուցողականության չկայացման համար առաջին հերթին պատասխանատու է իշխանական թևը, այնուհետև՝ ընդդիմությունը, որն, ի տարբերություն իշխանության, չի տիրապետում վարչական լծակների իր կողմից առաջ քաշած ծրագրերն իրականացնելու համար:

Կառուցողական խոսույթի անհաջող փորձեր նկատվել են նաև քաղաքացիական նախաձեռնությունների և կառավարության միջև: Մասնավորապես՝ տարկետման վերացման դեմ պայքարող ուսանողների նախաձեռնության ներկայացուցիչների և կառավարության միջև արդյունավետ երկխոսության փորձերը հիմնականում տապալվել են:

Հետևապես՝ ներքաղաքական խոսույթում առկա թույլ կառուցողականությունն առաջին հերթին պայմանավորված է վերը նշված հանգամանքներով: Ավելի հաճախ կառուցողականությունը մերժող խոսութային տարրեր բովանդակվել են իշխող ուժի ներկայացուցիչների խոսույթում, որտեղ շեշտադրվել է, որ բոլոր որոշումները կայացվում են կուսակցական գրասենյակում՝ այդպիսի խոսույթով նվազեցնելով խորհրդարանի դերը և նշանակությունը որպես ներկայացուցչական մարմին, որը կառուցողականություն դրսևորելու կարևորագույն պետական ինստիտուտն է: Հարկ է նշել, որ խորհրդարանում եղել է նաև կառուցողական խոսույթի բացառիկ դեպք, ինչպես օրինակ՝ 2017թ. նոյեմբերին ԵՄ-ի հետ համաձայնագրի ստորագրման վերաբերյալ խոսույթը, երբ թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր խմբակցություններն այս հարցում ցուցաբերեցին քաղաքական կոնսենսուս:

Փաստարկվածության տեսանկյունից ներքաղաքական խոսույթում նկատվել են թույլ և խոցելի կողմեր: Բազմաթիվ դեպքերում կառավարության, խորհրդարանական մեծամասնության կամ ընդդիմության ներկայացուցիչների խոսույթում պնդումները չեն եղել փաստարկված և հիմնավոր, այլ՝ վերացական: Առաջ քաշված որոշ մոտեցումներ չեն եղել լիարժեք հիմնավորված: Օրինակ՝ կառավարության կողմից ներկայացված օրինագծերի վերաբերյալ խորհրդարա-

նում բերված հիմնավորումները հաճախ չեն բխել հանրության լայն զանգվածների շահերից, ինչպես օրինակ՝ հարկային օրենսգրքում եկամտահարկի հետ կապված համապատասխան փոփոխությունները: Խոսույթում նկատվել են նաև իշխանական և ընդդիմադիր որոշ գործիչների կողմից սեփական կարծիքները որպես փաստեր ներկայացնելու համառ փորձեր: Ընդդիմադիրների խոսույթում նկատվել է խիստ ընդգծված քննադատություն իշխող ուժի կողմից առաջ քաշված օրինագծերի վերաբերյալ: Այդ տեսանկյունից մեծ աղմուկ բարձրացրեցին զինապարտության մասին օրենքում առաջարկվող փոփոխությունները, որոնց դեմ քննադատական խոսույթ և անհնազանդության վարքագիծ դրսևորվեց նաև խորհրդարանից դուրս՝ ուսանողների շրջանում: Այդ բողոքի ակցիաները հենվում էին առաջարկվող փոփոխությունների անհրաժեշտության թույլ փաստարկվածության վրա: Հետևապես՝ հարկ է նկատել, որ հաճախ կառավարության խոսույթում ներկայացված տեսակետները չեն համապատասխանել իրական վիճակին, չեն համապատասխանել հանրության լայն զանգվածների սպասումներին: Ներքաղաքական խոսույթում պոպուլիստական դրսևորումները ևս բավականին շատ են եղել: Մի շարք որոշումների, օրենքների ընդունումն իշխանությունը հիմնավորել է իր՝ քաղաքական մեծամասնություն լինելու հանգամանքով՝ իրենց վստահել է ժողովրդի մեծամասնությունը, ինչը ձևական տրամաբանության համաձայն՝ ամենևին չի նշանակում փաստարկված խոսույթ, քանի որ մեծամասնություն լինել չի նշանակում մշտապես իրավացի լինել: Եվ հակառակը՝ քաղաքական փոքրամասնություն լինելը նույնպես չի նշանակում մշտապես սխալական լինել: Ընդդիմադիրների խոսույթը ևս միշտ փաստարկված չի եղել, այլ սահմանափակված է եղել զուտ «քննադատել քննադատելու համար» սկզբունքով: Օրինակ՝ որոշ դեպքերում կառավարման խորհրդարանական համակարգին կողմնակից լինելը և հետո այդ համակարգը քննադատելը զուտ այն պատճառով, որ դա ոչ թե իրենց, այլ իշխանության նախաձեռնությունն էր:

Այսպիսով՝ հարկ է արձանագրել, որ 2017թ. ներպետական խոսույթն ընդհանուր առմամբ տարբերվել է իրական քաղաքականությունից, հաճախ մեծամասնության ներկայացուցիչների տիրապետող

կարծիքները ներկայացվել են որպես փաստեր, խոսույթը հարուստ է եղել նաև պոպուլիզմով, որը խիստ բացասաբար է ազդել դրա փաստարկվածության վրա: Ներքաղաքական խոսույթը մեծ մասամբ զուրկ է եղել նաև կառուցողականությունից: Արդյունքում՝ շրջանառվող խոսույթում *կառուցողականության և փաստարկվածության* ցուցանիշը *0-1 միավորանոց սանդղակում կազմել է 0,25:*

Համադրելով 2017թ. ներքաղաքական խոսույթի վերլուծության արդյունքները՝ ստացվում է հետևյալ պատկերը՝

Գծապատկեր 7



2017թ. ՀՀ-ում ներքաղաքական խոսույթի տարրերի բովանդակային համամասնությունը ցույց է տալիս, որ թեև բարձր ցուցանիշ է արձանագրվել խոսույթի քաղաքական մասնակցության բաղադրիչի համար (0.75), ինչը վկայում է խոսույթում քաղաքական ակտիվության խրախուսման մասին, սակայն շատ մյուս բաղադրիչներից մի քանի անգամ ցածր ցուցանիշներն են արձանագրվել կառուցողականության և փաստարկվածության բաղադրիչի համար (0.25): Արդյունքում, թեև գրանցվել է բավական

բարձր ակտիվություն, սակայն խոսույթն աչքի է ընկել շատ ցածր արդյունավետությամբ և արդյունքում ընդհանրական ցուցանիշը ստացվել է բավական ցածր: Դա նշանակում է, որ ընդհանուր առմամբ շրջանառվող խոսույթը տարբերվել է քաղաքական պրակտիկայից, ինչը վկայում է քաղաքական խոսույթի իմիտացիոն բնույթի մասին:

ՀՀ-ում քաղաքական մշակույթի խոսութային չափման միջոցով քաղաքական վարչակարգի գնահատման համար՝ ըստ մշակված բանաձևի, անհրաժեշտ է իրար գումարել ՔՄԽՉ մեթոդով սահմանված քաղաքական խոսույթի հինգ փոփոխականների միավորները, որոնց հանրագումարի արդյունքում կարելի է պարզել, թե ՀՀ-ում ինչպիսին է քաղաքական մշակույթը և ինչ քաղաքական վարչակարգ է ձևավորվել:

$$\Phi=\Phi_1+\Phi_2+\ldots+\Phi_5= 0.60+0.48+0.75+0.57+0.25=2.65$$

Արդյունքում՝ ՀՀ-ում քաղաքական մշակույթի խոսութային չափման միջոցով քաղաքական վարչակարգի գնահատման 2017թ. ցուցանիշը կազմել է 2.65, որի համաձայն՝ հայաստանյան քաղաքական մշակույթում գերակշռել են հպատակային և թույլ (ոչ արդյունավետ) մասնակցային մշակույթին բնորոշ տարրերը, ինչը համապատասխանում է կիսաավտորիտար քաղաքական վարչակարգին, որն ավելի մոտ է կիսաժողովրդավար, քան ավտորիտար վարչակարգին:

Ինչ վերաբերում է 2017թ. ներքաղաքական խոսույթին, ապա այն հիմնականում կարելի է գնահատել որպես թույլ բազմակողմ խոսույթ, որում գերակշռել են ոչ կառուցողական, ոչ արդյունավետ տարրերը: Շատ հաճախ բազմակողմ քաղաքական խոսույթը կրել է իմիտացիոն բնույթ՝ հագեցած լինելով պոպուլիզմով:

Ստորև բերված աղյուսակում ցույց է տրված քաղաքական վարչակարգերի դասակարգման հինգ խմբերի մեջ Հայաստանի զբաղեցրած տեղը (միավորը 2,65), ինչը բնորոշում է ՀՀ-ում քաղաքական խոսույթի, քաղաքական մշակույթի և վարչակարգի տեսակները:

Գծապատկեր 8



Հետազոտության հավատարժանության ստուգման նպատակով ՔՄԽՉ մեթոդով Հայաստանում քաղաքական վարչակարգի գնահատ-

ման արդյունքը համեմատվել է նաև Ազատության տան (Nations in Transit) և Էկոնոմիստ Ինթելիջենս Յունիթսի (Democracy Index) 2016-2017թթ. Հայաստանի ցուցանիշների հետ:

Ըստ Ազատության տան 2017թ.-ի ինդեքսի Հայաստանի ցուցանիշը 5,39 է[44], ինչը համապատասխանում է կիսաավտորիտար վարչակարգի: Քաղաքական վարչակարգի գնահատման առումով նմանատիպ արդյունք է գրանցվել նաև Էկոնոմիստ Ինթելիջենս Յունիթսի 2016թ. ժողովրդավարության ինդեքսի տվյալով, որի համաձայն՝ ՀՀ-ում քաղաքական վարչակարգի ցուցանիշը եղել է 3.88[45], ինչն այն բնորոշում է որպես ավտորիտար վարչակարգ: Փաստորեն՝ 2017թ. ՀՀ-ում ՔՄԽՉ մեթոդով քաղաքական վարչակարգի գնահատման, Ազատության տան և Էկոնոմիստի ժողովրդավարության ինդեքսների արդյունքները համապատասխանում են միմյանց: Այս իրողությունը ցույց է տալիս, որ առաջարկվող ՔՄԽՉ մեթոդը կարող է լինել արդյունավետ և անհրաժեշտության դեպքում՝ որպես հավելյալ կամ օժանդակ մեթոդ, կիրառվել այլ երկրնում նմանատիպ չափումներ իրականցնելու նպատակով: Միաժամանակ, տարբերություն Ազատության տան, Էկոնոմիստի ժողովրդավարության և քաղաքական վարչակարգերի գնահատման մի շարք այլ ինդեքսների՝ ՔՄԽՉ մեթոդի նորույթն այն է, որ վերջինս թույլ է տալիս պարզել ոչ միայն քաղաքական վարչակարգի տեսակը, այլև այն բացահայտում է հասարակության քաղաքական մշակույթում և քաղաքական խոսույթում տիրապետող տարրերը, ինչպես նաև դրանց առանձնահատկությունները: Այս մեթոդի կիրառության արդյունքում քաղաքական վարչակարգի տեսակը որոշվում է քաղաքական մշակույթի և քաղաքական խոսույթի միջև փոխադարձ կապի գնահատմամբ: Հետևապես՝ ՔՄԽՉ մեթոդը, ի տարբերություն այլ մեթոդների, քաղաքական պրակտիկան վերլուծում է «քաղաքական վարչակարգ - քաղաքական մշակույթ - քաղաքական խոսույթ» եռամիասնության համատեքստով: Սակայն հարկ է նշել, որ այդ մեթոդի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն նրա գործիքա-

[44] Nations in Transit 2017 The False Promise of Populism, https://freedomhouse.org/report/nations-transit/nations-transit-2017

[45] The Economist Intelligence Unit's Democracy Index, Explore the Democracy Index Results 2006 - 2016, https://www.eiu.com/topic/democracy-index

կազմի ճշգրիտ ընտրությամբ և կիրառությամբ, այլև էմպիրիկ նյութի օբյեկտիվ վերլուծությամբ, որտեղ հետազոտողը պետք է խոսույթի մեկնաբանության ժամանակ առավելագույնս հարազատ մնա խոսույթի օբյեկտիվ ընկալմանը և հնարավորինս խուսափի խոսույթի վերլուծության մեջ ներառել քաղաքական ինստիտուտների և գործ-ընթացի վերաբերյալ իր սուբյեկտիվ ընկալումները:

Եզրակացություն

Իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որ

- Ամբողջատիրության խոսույթին հատուկ է մենախոսական բնույթը՝ հագեցած պաթոսով և հուզականությամբ, որտեղ խոսույթի հասցեատերը՝ ժողովուրդը, զուտ ազդվող օբյեկտ է և չի կարող իրական երկխոսության, առավել ևս՝ հակասության մեջ մտնել պաշտոնական խոսույթի հետ: Պաշտոնական խոսույթը չի հանդուրժում որևէ այլ խոսույթ, միակողմանի է և խրախուսում է ժողովրդի անմնացորդ նվիրվածությունն ու աջակցությունը գործող վարչակարգին:
- Ավտորիտար խոսույթին հատուկ են ինչպես ամբողջատիրա-կան, այնպես էլ ժողովրդավարական խոսույթի տարրեր: Սակայն այն մեծապես կրում է կեղծ բազմակողմ կամ իմիտացիոն բնույթ, որտեղ շրջանառվող խոսույթն ու քաղաքա-կան պրակտիկան տարբերվում են միմյանցից: Մինչդեռ ժողովրդավարական խոսույթը հիմնականում համապատաս-խանում է քաղաքական պրակտիկային և հիմնվում է քաղաքական տարբեր դիրքորոշումների համաձայնեցման վրա՝ ապահովելով իրական բազմակողմ կոնսենսուս:
- Առաջարկվող ՔՄԽՉ մեթոդը կարող է կիրառվել քաղաքական խոսույթի վերլուծության հիման վրա քաղաքական վարչակար-գերի և քաղաքական մշակույթի գնահատման համար: Այդ մեթոդի արդյունքների հավատարժանության ստուգման նպատակով հայտնի միջազգային ինդեքսների արդյունքների հետ համեմատությունը վկայում է դրանց համադրելիության մասին:

- ՔՄԽՉ մեթոդով իրականացված հետազոտության արդյունքը վկայում է, որ Հայաստանում ձևավորվել է կիսաավտորիտար վարչակարգ, որտեղ գերակշռում է ոչ կառուցողական, ոչ արդյունավետ բազմակողմ խոսույթը կամ բազմակողմ խոսույթի իմիտացիան, իսկ քաղաքական մշակույթում շարունակում են տիրապետող լինել թույլ մասնակցային մշակույթի տարրերը:

Evaluating Political Regime through Discourse Measurement of Political Culture: The Case of the Republic of Armenia

EMIL ORDUKHANYAN
Yerevan State University of Languages and Social Sciences

The article proposes to evaluate the level of political culture and the nature of current political regime through political discourse. The article argues that the suggested methodology for measuring political culture through the study of political discourse (the discourse measurement of political culture, DMPC) can be an effective and alternative method in the multitude of quantitative methods used in political science. The methodology of discourse measurement of political culture proposes to separate the semantic units in discourse, i.e. words, word combinations, expressions, etc., which can be important in the evaluation of political regimes. The method has been used for the measurement of political culture and evaluation of political regime type in Armenia. The research conducted by the DMPC method proves that Armenia has a semi-authoritarian regime that stands closer to semi-democratic regime and is still dominated by a non-constructive multilateral discourse or its imitation and the elements of weak participatory political culture continue to dominate politics.